նիք էր, որ ես նոյնպէս չէի կարող իմանալ, եթէ Կարոյի նամակն իմ ձեռքը չընկնէր: Եւ որտեղի՞ց յայտնի էր նրան, թէ ծերունի որսորդի «ճտերը», այսինքն՝ Կարօն իր ընկերների հետ, գնացել էին զանազան կողմեր: Եւ ի՞նչ կասկածաւոր մի բան կար նրանց վարմունքի մէջ, որը, որպէս երեւում էր, ընդդէմ էր քեռի Պետրոսի համակրութեանը: Այս հարցերն ինձ համար բոլորովին հանելուկներ էին: Այնոամենայնիւ, ինձ խիստ անհաճոյ երեւեցաւ քեռի Պետրոսի արհամարհական խօսքերն այն մարդկանց մասին, որոնց ես շատ պատուում էի: Ես ուզեցի, որպէս ասում են՝ նրա բերնի համը տալ, բայց այն միջոցին ներս մտաւ վանքի աբեղաներից մէկը: Դա Կարապետ հայր սուրբն էր, այն վարդապետը, որ այնպէս անխիղճ կերպով անբախտացրել էր մղդսի Թորոսի հարսին, եւ երկու թշոառ զոհերի մահոան պատճառ էր դարձել...

Մարիամը եւ Մագթաղը վաղուց ինձ աչքով լուռ նշաններ էին անում, որ շուտ վերջացնեմ քեռի Պետրոսի հետ: Նրանք շատ ուրախացան, որ աբեղայի յայտնուելն ընդհատեց մեր խօսակցութիւնը, եւ ես դուրս եկայ վրանից:

— Դու էլի կը գա՞ս մեր մօտ, Ֆարհատ, — հարցրուց քեռի Պետրոսը:

— Ի հարկէ, — պատասխանեցի ես:

— Լաւ, գնայ:

Աբեղան եւ քեռի Պետրոսը նստեցան միմեանց շատ մօտ եւ մեզ բոլորովին անլսելի ձայնով խօսում էին:

Մայրս նոյնպէս վրանից դուրս եկաւ ինձ հետ: Նա ասաց, թէ շատ կը ցանկանար, որ ես նրա մօտ մնայի, բայց որովհետեւ ծերունի որսորդի ընտանիքը եկած են առանց տղամարդի, չէ ուզում ինձ բաժանել նրանցից, միայն ցանկանում է, որ ես գոնեայ ցերեկներն անցուցանեմ նրա մօտ, իսկ գիշերները Մարօի եւ Մարգարիտի մօտ մնամ, չիցէ թէ նրանց մի վտանգ պատահի որովհետեւ ուխտաւորների մէջ շատ անկարգութիւններ էին լինում:

— Բայց թող քոյրերս այս գիշեր մնան ինձ մօտ, — խընդրեցի մորիցս:

— Հա՛, մայրիկ, մենք կը մնանք Մարօի մօտ, — ասաց Մարիամը:

— Լաւ, մնացէք, — ասաց մայրս, — եւ կրկին ինձ համբուրելով, ճանապարհ դրեց:

Երբ փոքր-ինչ հեռացանք սալմաստեցի ուխտաւորների իջեւանից, ես քոյրերիցս հարցրի, թէ մեր քաղաքացիներից ովքե՞ր են եկած: